ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԵՎ ՌՈՒՍԱՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Հայ ժողովրդի պատմության առանձնահատկություններից մեկն այն է, որ դեռևս վաղ միջնադարից օտար զավթիչների թալանչիական արշավանքների ու դաժան տիրապետության հետևանքով ստեղծված անտանելի պայմաններից հարկադրված երկրի ազգաբնակչության մի զգալի մասը թողել է մայր հայրենիքը և զանգվածաբար դիմել արտագաղթի։ Այս եղանակով աշխարհի տարբեր մասերում առաջացել են գաղթավայրեր, որոնցից շատերը դարեր շարունակ գոյություն են ունեցել՝ պահպանելով իրենց ազգային նկարագիրը։ Ուշ միջնադարում Հայաստանում ստեղծված ծանր ու մռայլ ժամանակաշրջանում, երբ վերացել էր խաղաղ կյանքի ու ստեղծագործական աշխատանքի ամեն մի հնարավորություն, հայ գաղթավայրերը, բնականաբար, դառնում են հայկական մշակույթի ու հասարակական կյանքի կարևոր կենտրոններ։ Մեր ժողովրդի XVIII—XIX դդ. հասարակական-քաղաքական կյանքի և մշակույթի պատմության մեջ առանձնահատուկ դեր են կատարել հատկապես ռուսահայ գաղթօջախները։

Ռուսահայ գաղթավայրերի առաջացումն ու զարգացումը կապված է հայ-ռուսական հարաբերությունների հետ, կյանքի է կոչվել և արգասավորվել այդ հարաբերություններով։ Ռուսահայ գաղթավայրերը հայ-ռուսական հարաբերությունների ամբողջական շղթայի մի կարևոր մասն են կազմել։ Պատահական չէ, որ հնից եկող պատմական կապերն ամրապնդվում և պարբերական բնույթ են ստանում հայ ազատագրական շարժման և Ռուսաստանի հանդեպ ունեցած հետաքրքրությունների ու ակնկալությունների վերելքի շրջանում՝ XVIII դարի երկրորդ կեսին և XIX դարի սկզբներին։ Պատմական այդ ժամանակաշրջանում է, որ հիմնադրվում և զարգացում են ապրում մի շարք հայ գաղթօջախներ, ինչպես նաև աշխույժ են ապրում նախկինում հիմնադրված հայ համայնքները։

Տակավին XVIII դարի 20-ական թթ. բարենպաստ պայմաններ են ստեղծվում Ռուսաստան գաղթել ցանկացող հայերի համար։ 1724 թ. նոյեմբերի 10-ին Պետրոս I-ը ստորագրում է մի հրամանագիր, որով Հյուսիսային Կովկասում ու Մերձկասպյան շրջաններում բնակվող հայերին մի շարք արտոնություններ են շնորհվում[1]։ Կայսերական հրամանագրով հայերին բնակատեղի էր հատկացվում Ռուսաստանին միացված մերձկասպյան տարածություններում և գաղթողներին ցույց էր տրվում զգալի աջակցություն։ Դրանից հետո մինչև դարավերջը, մասնավորապես Պետրոս Մեծի ակտիվ արտաքին քաղաքականությունը որդեգրած Եկատերինա II կայսրուհու օրոք (1762—1796 թթ.), հրապարակվեցին օտարերկրացիներին, այդ թվում և հայերին, տնտեսական ու իրավական

[1] *Տե՛ս* Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, док. № 258.

նշանակալից առանձնաշնորհումներ վերապահող մի շարք կայսերական հրովարտակներ[2]։

Ռուսական արքունիքը նպատակ ուներ Հյուսիսային Կովկասում ու Հարավային Ռուսաստանում զարգացնել այգեգործությունը, արհեստները և հատկապես առևտուրը։ Այդ գործում շոշափելի գեր խաղացին հայերը։ Քաջածանոթ լինելով արևելյան երկրների և տեղի ժողովուրդների լեզուներին և սովորություններին, նրանք հեշտությամբ ու հաջողությամբ էին տնտեսական գործունեություն ծավալում և առևտուր անում։ Ռուսաստանի նորաստեղծ և հնից եկող հայ գաղթավայրերը իրենց համեստ շրջանակներում ոչ միայն ուրույն կերպով ու աշխուժորեն մասնակցում էին Հարավային Ռուսաստանի ներքին ու արտաքին առևտրատնտեսական կյանքին, այլև սերտ կապերի մեջ էին մայր հայրենիքի հետ։ Նրանք կապող օղակ էին մայր հայրենիքի և հյուսիսային կայսրության միջև։

Արդ, որո՞նք էին այդ գաղթավայրերը։

XVIII դարի 20-ական թթ., հայ ազատագրական շարժման պարտությունից հետո, զգալի թվով հայեր, օգտվելով Պետրոս I-ի հրամանագրի ընձեռած հնարավորություններից, Ղարաբաղից և Զանգեզուրից գաղթում են Ռուսաստան։ Այդ գաղթի հետևանքով Ռուսաստանի հարավային սահմաններում՝ Կովկասում առաջացած հայկական գաղթօջախներից էր Ղզլարը։

Ղզլար ամրոցի հիմնադրումից մի քանի տարի անց՝ 1730-ական թթ. կեսերին բավական թվով հայեր հաստատվում են այնտեղ, ստանում հողամասեր և զբաղվում երկրագործությամբ։ Ղզլար գաղթած հայերը ազատվում են զինվորական ծառայությունից, պայմանով, որ շարունակեն բնակվել նույն տեղում և զբաղվեն հողագործությամբ։

1762 թ. վերանորոգվում է Ղզլարի ամրոցը և մի շարք ձեռնարկումներ են կատարվում քաղաքը և նրա շրջակայքը Կովկասի լեռնաբնակ ժողովուրդներով, ինչպես նաև հայերով ու վրացիներով բնակեցնելու ուղղությամբ։ XIX դարի սկզբներին Ղզլարի հայ բնակչության թիվը անցնում էր չորս հազարից։

Ղզլարի հայկական գաղթավայրում արագորեն զարգացավ այգեգործության՝ հայերի համար ավանդական դարձած այնպիսի կարևոր ճյուղ, ինչպիսին էր խաղողագործությունը։ Շերամապահության հիման վրա այնտեղ զարգացավ մետաքսագործությունը։

1763 թ. Կովկասյան գծի մյուս ամրությունների շարքում, որպես սահմանամերձ ամրոց, հիմնադրվում է Մոզդոկը[3]։ XVIII դարի վերջին քառորդում Մոզդոկը դառնում է Հյուսիսային Կովկասի առևտրատնտեսական կարևոր կենտրոններից մեկը։ 1785 թ. նա ստանում է գավառական քաղաքի իրավունք։ Այնտեղ բնակվող տարբեր ժողովուրդների զանգվածները, այդ թվում և հայերը, արդեն շատ հարցերում առաջնորդվում էին իրենց ազգային սովորություններով։ Դարավերջին քաղաքի հայկական բնակչությունը այնքան է աճում, որ կարիք է զգացվում կառուցելու երեք եկեղեցի[4]։

---

2 Տե՛ս «Полное собрание законов Российской империи с 1649 года», 1830, т. XVI, № 12099.

3 Ղզլար և Մոզդոկ գաղութների մասին տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. IV, Երևան, 1972, էջ 414—415։

4 Տե՛ս Н. Г. Волкова, О расселении армян на Северном Кавказе до начала XX в., «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3։

XVIII դարի երկրորդ կեսին նկատելիորեն աճեց ու զարգացավ Ռուսաստանի ամենահին հայկական համայնքը՝ Աստրախանի գաղթօջախը։ Հայերը այնտեղ հաստատվել էին դեռևս XVI դարից։ Աստրախանի հայերը ազատված էին պետական ծառայություններից։ 1746 թ. նրանց տրվեց վարչական լիազորություններից օգտվող սեփական դատարան ունենալու իրավունք, իսկ երկու տասնամյակ անց ցարական հատուկ հրամանագրով թույլատրվեց հիմնել իրենց մագիստրատը։ Աստրախանի հայերը նույնպես զբաղվում էին խաղողագործությամբ և գինեգործությամբ, սակայն նրանց հիմնական զբաղմունքը արհեստագործությունն ու առևտուրն էր։

Հումքի և վաճառահանման շուկաների մոտիկությունն ու հարմարավետությունը նպաստեցին, որպեսզի Աստրախանը XVIII դարում դառնար Ռուսաստանի մետաքսե ու բամբակե գործվածքների արտադրության նշանավոր կենտրոն։ 1734 թ. հայերը այնտեղ հիմնում են առաջին մետաքսագործական մանուֆակտուրան։ Արդեն 1787 թ. Աստրախանում հաշվվում էր 38 մետաքսագործական և 85 բամբակե գործվածքների ֆաբրիկա, որոնք ունեին 968 դազգահ։ Այդ ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունը, մանավանդ փոքրածավալ մանածագործական արհեստանոցները, պատկանում էին տեղի հայերին[5]։

Աստրախանի հայերն ունեին իրենց ներքին ինքնավարությունը։ XVIII դարի կեսերին հիմնված հայկական դատարանը կամ ռաթհաուզը իրականացնում էր ներքին ինքնավարության ու դատավարության ֆունկցիաները։

Նշանակալից է եղել Ռուսաստանի կարևորագույն երկու կենտրոնների՝ Մոսկվայի և Պետերբուրգի հայ գաղթավայրերի դերը։ Դեռևս XVI դարում կազմավորված Մոսկվայի հայ գաղթօջախը ստվարանում և կարևորություն է ստանում հատկապես XVII դարի 60-ական թթ., Մոսկվայի և հայկական առևտրական ընկերության միջև կնքված պայմանագրից հետո։ 1667 թ. կնքված պայմանագրի հետևանքով Մոսկվան փաստորեն դարձավ հայ վաճառականների, նրանց գործակալների, արհեստավորների, դիվանագիտական ծառայողների մի զգալի մասի հանգրվանն ու գործատեղին։ Առևտրական այդ պայմանագրով մաքսային, հարկային և այլ կարգի նպաստավոր պայմաններ էին ստեղծվում հայերի համար[6]։ Վեճերի և թյուրիմացությունների դեպքում հայերը դիմում էին ռատուշա, հաճախ՝ դեսպանական ատյան։ Հարցի լուծմանը մասնակցում էին Մոսկվայի հայ ավագանու ներկայացուցիչները։ Կյանքի ու գույքի ապահովությունը, առևտրի ու արդյունագործության մեջ հայերին տրված առանձնաշնորհումները մեծապես նպաստում և ուժեղացնում էին նրանց ներհոսը Մոսկվա։ Բազմաթիվ հայ ընտանիքների հետ Մոսկվա է տեղափոխվում նաև Լազարյանների գերդաստանը։

1760-ական թթ. Մոսկվայի երեք մետաքսագործական ֆաբրիկաներ պատկանում էին հայերին, իսկ երկուսում էլ նրանք հանդես էին գալիս որպես բաժնետերեր[7]։ Հայ բնակչության ստվարանալու մասին է վկայում այն փաստը, որ XVIII դարի 70-ական թթ. Մոսկվայում կառուցվում է երկրորդ հայ-

---

5 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. IV, էջ 410։

6 Տե՛ս В. Восканян, Ново-торговый устав и договор с Армянской компанией, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1947, № 6։

7 Տե՛ս Любомиров, Очерки по истории русской промышленности, М., 1947, էջ 578։

կական եկեղեցին։ Հատկապես XVIII դարի վերջին քառորդից սկսած որոշակի է դառնում Մոսկվայի հայկական գաղթօջախի առաջավոր դերը ռուսահայերի և ամբողջ հայ ժողովրդի մշակութային ու հասարակական կյանքում։

Պետերբուրգի հայկական համայնքը Մոսկվայի նման իր բնակչության քանակով խիստ համեստ ու փոքրաթիվ էր, սակայն մեծ էր նրա հասարակական դերը։ Պետերբուրգում հայերը սկսել էին բնակվել քաղաքի հիմնադրման առաջին տասնամյակներից։ Այնտեղ հաստատվողներից առաջինները հայ վաճառականներն էին, որոնք հիմնել էին իրենց առևտրական գրասենյակները և Բալթիկ ծովով առևտուր էին անում եվրոպական երկրների հետ։ Նևայի ափերին հիմնադրված ռուսական նոր մայրաքաղաքի հետզհետե աճող դերի հետ մեկտեղ աճում էր նաև տեղի հայ ազգաբնակչությունը։ Վաճառականների կողքին հանդես են գալիս արհեստավորներ, արդյունաբերողներ, թարգմանիչներ և այլն։

Պետերբուրգում հայերն ունեին բավական թվով մետաքսագործական ֆաբրիկաներ, ուր արտադրվում էին զանազան տեսակի արևելյան գործվածքներ։ 1779 թ. կառուցվում են Ս. Կատարինեի (կանգուն է մինչև այժմ), իսկ մեկ տասնամյակ անց՝ Ս. Հարության եկեղեցիները։ Պետերբուրգի հայկական գաղութը կարևոր դեր էր կատարում ինչպես հայ-ռուսական քաղաքական հարաբերություններում, այնպես էլ ռուսահայ մյուս գաղթավայրերի հետ ունեցած տնտեսական ու մշակութային կապերում[8]։

XVIII դարի վերջին քառորդում հայկական նոր գաղթավայրեր են առաջանում Հարավային Ռուսաստանում։ 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Սև ծովի հյուսիսային առափնյա շրջանները անցնում են Ռուսաստանի տիրապետության տակ, իսկ Ղրիմի խանությունը անջատվում է Թուրքիայից և անկախ հայտարարվում։ Ղրիմի խանությունը թուլացնելու, այն Ռուսաստանին միացնելու, հարավի ընդարձակ տափաստանները բնակեցնելու և տնտեսական կյանքը աշխուժացնելու նպատակով 1778 թ. գեներալ Ա. Սուվորովի գլխավորությամբ կազմակերպվեց Ղրիմի 12600 հայերի գաղթը։ Ղրիմահայերը հաստատվեցին Դոն գետի ձախ ափին, Դմիտրի Ռոստովսկի ամրոցից (այժմ՝ Ռոստով քաղաք) չորս կմ հեռավորության վրա և հիմնադրեցին Նոր Նախիջևան քաղաքը և նրա մոտակայքում Զալթիր, Թոփտի, Մեծ Սալա, Սուլթան Սալա և Նեսվիտա գյուղերը։

Ինչպես ուրիշ դեպքերում, այս անգամ ևս ռուսական կառավարությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում իր տիրապետության սահմաններում հանգրվանած հայ զանգվածների համար։ Եկատերինա II-ի 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով Դոնի ավազանում հաստատված ղրիմահայերին տրվեցին տնտեսական ու իրավական զգալի առանձնաշնորհումներ[9]։

Դոնի հայկական գաղթավայրում լայն զարգացում են ապրում արհեստները, հատկապես՝ կաշեգործությունը, դարբնությունը, պղնձագործությունը և հայերի համար ավանդական դարձած ոսկերչությունն ու արծաթագործությու-

---

8 Պետերբուրգի հայկական գաղութի մասին տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. IV, էջ 423—428։ К. Григорьян, Армянская культурная колония в Петербурге в XVIII веке, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1953, № 9։

9 Տե՛ս «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», т. I. М., 1833, էջ 179—180։

նը։ Արհեստները այնքան են աճում ու մասնագիտանում, որ արհեստավորները ստեղծում են իրենց հատուկ կազմակերպությունները՝ համքարությունները, որոնք, կրելով ռուսական միջավայրի ազդեցությունը, այնուամենայնիվ, իրենց ներքին կառուցվածքով, վարք ու բարքով նման են եղել Անդրկովկասի հայ համքարություններին։

Դոնի հարթավայրի բերքատու հողերն ու արոտավայրերը նպաստում էին երկրագործության ու անասնապահության զարգացմանը։ Երկրագործության մեջ աւաջատար նշանակություն ունեին հացահատիկային կուլտուրաների մշակումն ու այգեգործությունը։ Հայերը Դոնի տափաստանում մետաքսի մշակման առաջին տարածողները եղան։

Նկատելի վերելք ապրեց ներքին ու արտաքին առևտուրը։ Դոնի հայերը ապրանքներով ողողում էին ոչ միայն Ռոստովի, Նովոչերկասկի ու Տագանրոգի շուկաները, այլև Մոսկվայի, Նիժնի Նովգորոդի և այլ քաղաքների տոնավաճառները[10]։

Գրիգորիոպոլի հայկական գաղութի հիմնադրումը կապված է ռուս-թուրքական 1787—1791 թթ. պատերազմի հետ։ Յասիի հաշտության պայմանագրի համաձայն թուրքական տիրապետության տակ գտնվող Մոլդավիայից ու Բեսարաբիայից գաղթած շուրջ 4000 հայեր նախապես տեղավորվում են Դուբասար քաղաքում, ապա Դնեստր գետի ավազանում հիմնադրում են Գրիգորիոպոլ քաղաքը, իսկ նրա շրջակայքում՝ Իոսիֆովկա և Վասիլևկա գյուղերը։ Գրիգորիոպոլի հայկական գաղութը ռուսահայ մյուս գաղթավայրերի նման առևտրատնտեսական ու մշակութային աշխույժ կյանք ունեցավ[11]։

1797 թ. հայ գաղթականների 3500 հոգուց բաղկացած մի խումբ անցնում է Կովկասյան լեռնաշղթան և հիմնում է Սուրբ Խաչ (այժմ Պրիկումսկ) քաղաքը, ստանալով առևտրով ու արհեստներով ազատորեն զբաղվելու իրավունք[12]։ Այդ տարիներին ստվարանում է Դերբենդի հայաբնակ գաղութը, հայկական համայնքներ են ստեղծվում Ստավրոպոլում, Գեորգիևսկում, Եկատերինոդարում (Կրասնոդար) և Հյուսիսային Կովկասի այլ վայրերում։

1783 թ. Ղրիմը Ռուսաստանին միացնելուց հետո թերակղզի վերադարձող հայ բնակչության ներհոսքի շնորհիվ աստիճանաբար սկսեցին վերակենդանանալ և աշխույժ ապրել տեղի հայ գաղթավայրերը, որոնք թուլացել ու մարելու վտանգի տակ էին[13]։

Վերը հիշատակված հայկական գաղթավայրերը ստացան տնտեսական և իրավաքաղաքական որոշ արտոնություններ։ Նորահաստատ գաղութները տասը տարով ազատվում էին բոլոր տեսակի հարկերից, ռուսական զորքերին օթևան և պարեն հատկացնելու պարտավորություններից (պոստոյ), զինվորակոչությունից (ռեկրուտ)։ Երկրագործներին հատկացվեցին բավարար քանակությամբ հողատարածություններ։ Հայ զանգվածներին իրավունք էր վերապահվում երկրի ներսում ու նրա սահմաններից դուրս ազատ առևտուր անել, մրգատու այգիներ գցել, գործարաններ ու ֆաբրիկաներ հիմնել։

---

10 Տե՛ս Վ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1967։

11 Տե՛ս Ж. А. Ананян, Армянская колония Григориополь, Ереван, 1969.

12 Տե՛ս Н. Г. Волкова, նշվ. աշխ.։

13 Տե՛ս Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, 1971։

Ավելորդ չէ նկատել, որ Պետրոս Մեծի ու Եկատերինա II-ի կողմից հայերին տրված և ապա Պավել I-ի (1799 թ.) ու Ալեքսանդր I-ի (1802 թ.) կողմից վերահաստատված շնորհագրերի[14] տնտեսական կյանքին վերաբերող մասը գործունեության լայն հնարավորություններ էր ստեղծում առաջին հերթին հայ առևտրաարդյունաբերական հարուստ խավերի համար։ Միաժամանակ ռուսահայ գաղութներին իրավունք էր վերապահվում գաղութի ներքին գործերը վարել հայերեն լեզվով, ազգային սովորությունների ու իրավական նորմերի հիման վրա։ Նրանց տրվում էր դավանանքի ազատություն, թույլատրվում էր կառուցել սեփական եկեղեցիներ և այլն։

Հարկ է նշել, որ հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդման շրջանում էջմիածնի կաթողիկոսությունը ջանում էր իր իրավասությունները տարածել աստիճանաբար աճող ու կարևոր դեր կատարող ռուսահայ բոլոր համայնքների վրա։ Մյուս կողմից, ռուսական արքունիքը լավ էր ըմբռնում միակ համազգային կազմակերպության՝ հայ եկեղեցու կարևոր դերը իր պլանները իրականացնելու գործում, ուստի և համակիր էր այդ ուղղությամբ նրա կատարած քայլերին։ Ժամանակի կրթված ու գործունյա հոգևորականներից կաթողիկոս Սիմեոն Երևանցին հատուկ պատվիրակություն է ուղարկում Եկատերինա II-ի մոտ և խնդրում ճանաչել էջմիածնի իրավասությունը ռուսահայերի վրա, վերջիններիս միավորել մի կրոնական թեմի մեջ, անմիջականորեն ենթարկելով այն էջմիածնին։ Կայսրուհին պատշաճ ձևով ընդունում է հայ պատվիրակությանը և հատուկ հրովարտակով (1768 թ. հուլիսի 30-ին) էջմիածնի կաթողիկոսության վրա է դնում Ռուսաստանում ապրող հայերի կրոնական թեմի ղեկավարությունը (1749 թ. Աստրախանի հայ եկեղեցին անջատվել էր էջմիածնից և ենթարկվում էր Գանձասարի կաթողիկոսությանը), որի կենտրոնն է դառնում Աստրախանը[15]։

Տրված առանձնաշնորհումների հիման վրա և նրանց ընձեռած հնարավորությունների սահմաններում խոշոր համայնքներում ստեղծվում են մագիստրատներ կամ ռաթհաուզներ, որոնք իրականացնում էին տվյալ գաղութի դատական, ոստիկանական և գործադիր իշխանության ֆունկցիաները։ Նոր Նախիջևանի հայկական մագիստրատը, օրինակ, ուներ իր հատուկ կնիքը, իսկ գաղութը՝ իր առանձին գերբը։

Հայկական գաղթավայրերում ներքին գործերը տարվում էին հայերեն, ազգային օրենքների ու ավանդությունների համաձայն, որը իր մարմնավորումն էր ստացել «Աստրախանի հայոց դատաստանագրքում»։ Դատաստանագիրքը կազմվել է 1765 թ., Աստրախանի բնակիչներ Եղիազար Գրիգորյանի, Գրիգոր Կամպանյանի և Սարգիս Օհանյանի կողմից։ Թեև «Դատաստանագրքի» հեղինակները իրենց օգտագործած գլխավոր աղբյուրներից առաջինը հիշատակում են Հուստինիանոսի օրենսգիրքը, սակայն ուսումնասիրությունից պարզվում է, որ նրա վրա առանձնապես զգացվում է ազգային սովորութային նորմերի, Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» և ռուսական միջավայրի ազդեցությունը։ «Աստրախանի հայոց դատաստանագիրքը» իր ստեղծման առա-

---

14 Տե՛ս ЦГИА СССР, ф. 1152, т. I, д. 35, թ. 15—16։

15 Г. А. Эзов, Начало сношений Эчмиадзинского патриаршего престола с русским правительством, Тифлис, 1901, էջ 6—8։

ջին տասնամյակներից շուրջ մեկ դար գործադրվել է ոչ միայն Աստրախանի, այլև Նոր Նախիջևանի, Ղզլարի, Մոզդոկի հայկական գաղթօջախներում[16]։

Ռուսահայերի տնտեսական և իրավաքաղաքական համեմատաբար բարվոք վիճակը ազդում է պարսկական և թուրքական տիրապետության տակ հեծող հայերի վրա, համակրությամբ տրամադրում նրանց հյուսիսային հարևանի նկատմամբ ու նրանց մեջ արմատավորում և ուժեղացնում Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու ձգտումը։

Ռուսահայ գաղթավայրերը կուլտուր-կրթական իրենց հաստատություններով և այդ ասպարեզում ունեցած գործունեությամբ կարևոր դեր կատարեցին ռուս և հայ ժողովուրդների հոգևոր շփումների ու փոխճանաչման գործում։ Իրոք, ռուսահայ զանգվածները տնտեսական աշխույժ կյանքին զուգահեռ նկատելի հաջողությունների հասան լուսավորության ու մշակույթի բնագավառում XVIII դարի վերջին քառորդից սկսած։ Դպրոցներ հիմնելու, մատաղ սերնդին ուսուցանելու և դաստիարակելու խնդիրը միշտ էլ հուզել է ռուսահայերին, սակայն այն իրականացնելու համար պայմաններ են ստեղծվում միայն 1780-ական թթ.։

Աստրախանի հայկական առաջին ուսումնական հաստատությունը հոգևոր վարժարանն էր, որը հիմնվում է 1780-ական թթ. սկզբներին։ Այդ նույն տարիներին առաջին վարժարաններն են հիմնվում Նոր Նախիջևանում և նրա մերձակայքում գտնվող հայ մշակույթի նշանավոր կենտրոն Ս. Խաչ վանքում։ Մինչև դարավերջը բացվում են մի շարք այլ ուսումնարաններ։ XIX դարի առաջին տասնամյակում Աստրախանում բացվում է ժամանակի պահանջները բավարարող Աղաբաբյան ուսումնարանը, որը գոյատևեց ավելի քան հարյուր տարի։ Այնտեղ 1816 թ. լույս տեսավ հայկական յոթերորդ, իսկ ռուսահայ՝ առաջին շաբաթաթերթը, որ կոչվում էր «Արևելյան ծանուցմունք»։ 1806 թ. Գրիգորիոպոլում Մ. Կյումուշխանեցու ջանքերով բացվում է ծխական դպրոց, իսկ տասը տարի անց դպրոցներ են բացվում Ղարասուբազարում և Ղրիմի հայաշատ այլ վայրերում։

Ռուսահայերի մտավոր կյանքում և առհասարակ հայ իրականության մեջ մեծ է եղել 1815 թ. Մոսկվայում հիմնադրված առաջին աշխարհիկ ուսումնարանի՝ Լազարյան ճեմարանի դերը։ Ճեմարանը շուտով դարձավ այն հիմնական օջախը, ուր իրենց կրթությունն էին շարունակում հայ գաղթավայրերի վարժարանների սաները և հաղորդակից դառնում ռուսական մշակույթին։ Ճեմարանը, մասնավորապես սովորող ռուս պատանիների միջոցով, ռուսական հասարակությանը հաղորդակից էր դարձնում հայկական մշակույթին ու պատմությանը։ Այդ իմաստով էլ ռուսահայ կուլտուր-կրթական հաստատությունները և առաջին հերթին Լազարյան ճեմարանը կարևոր դեր կատարեցին։

Դպրոցները կարիք ունեին դասագրքերի, բառարանների և առհասարակ գրականության, ուստի և անհրաժեշտ էր ունենալ տպարան։ Այդ պատճառով էլ դպրոցների հիմնադրման հետ միաժամանակ ռուսահայերը հիմնեցին նաև հայկական տպարան։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հրատարակչական գործի ծանրությունն ընկած էր Խալդարյանի տպարանի վրա[17]։ Գրիգոր Խալդարյանը

---

16 Տե՛ս Ֆ. Գ. Պողոսյան, Աստրախանի հայոց դատաստանագիրքը, Երևան, 1967։

17 Տե՛ս Վ. Բարխուդարյան, Ռուսահայ առաջին տպարանը, «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4։

Նոր Ջուղայի նշանավոր վաճառականի ընտանիքից էր։ Նա հաստատվում է Լոնդոնում, հայկական տառեր ձուլել տալիս և 1780 թ. հայ եկեղեցու դավանանքի վերաբերյալ մեկ գիրք տպագրելուց հետո, հաջորդ տարին տպարանը տեղափոխում է Պետերբուրգ։ Խալդարյանի տպարանը Ռուսաստանում գործեց քսան տարի (1781—1789 թթ.՝ Պետերբուրգում, 1790—1795 թթ.՝ Նոր Նախիջևանում, 1796—1800 թթ.՝ Աստրախանում) և այդ ընթացքում տպագրեց ավելի քան քառասուն գիրք։

Տպարանը արտասահմանից Պետերբուրգ տեղափոխելու հենց առաջին տարում՝ 1781 թ. լույս է տեսնում «Տետրակ այբբենական» ձեռնարկը։ Ազատագրական շարժման նշանավոր ներկայացուցիչ Մովսես Սարաֆյանի դուստր Կլեոպատրա Սարաֆյանը հրատարակում է «Գիրք, որ կոչի բանալի գիտության» աշխատությունը, որը ռուսաց լեզվի փաստորեն առաջին հայերեն ինքնուսույցն էր։ Հրատարակվում է Գ. Խալդարյանի կազմած հայ-ռուսերեն բառարանը և այլն։

Ռուսահայերի տպագրական-հրատարակչական գործի հիմնական խնդիրներից մեկը հայ ազատագրական շարժման նպատակներին ծառայելու, հայերին ռուսաց պատմությանն ու կուլտուրային ծանոթացնելու, նրանց մեջ ռուսական կողմնորոշումը ամրապնդելու, Ռուսական կայսրության նկատմամբ համակրությունը ուժեղացնելու ձգտումն է եղել։ Խալդարյանի տպարանից դուրս եկած կամ հրատարակության նախապատրաստած աշխատությունների ցանկն անգամ ինքյան շատ բան է ասում։ Այսպես, օրինակ, 1787 թ. հրատարակության է պատրաստվում Եղիշեի «Պատմություն Վարդանանց»՝ հայրենիքի ազատության ու անկախության համար պայքարի կոչող երկը։ Մի քանի տարի անց հրատարակվում է Ստեփանոս Սյունեցու «Ողբ և հառաչանք» աշխատությունը, ուր հեղինակը, նկարագրելով իր երկրի ու ժողովրդի տարաբախտ վիճակը, բոլոր զենքի ունակ մարդկանց կոչ է անում պայքարի ելնել տիրողների դեմ։ Հ. Արղությանը հատուկ նամակով ողջունում էր Մարգար Երևանցուն՝ Շահամիր Շահամիրյանի գիրքը թարգմանելու և տպագրության պատրաստելու համար, միաժամանակ հույժ կարևոր էր համարում Դավիթ Բեկին նվիրված աշխատության հրատարակությունը։ Նա 1786 թ. Գ. Խալդարյանին հայտնում էր Պետրոս I թագավորի համառոտ պատմության թարգմանության մասին և խնդրում 600 օրինակ հայերեն և ռուսերեն, 400 օրինակ միայն հայերեն լեզվով տպագրել և ուղարկել իրեն ուրիշ երկրներ առաքելու համար[18]։ Միաժամանակ աշխատանք էր տարվում ռուսական շրջաններին հայկական իրականության հետ ծանոթացնելու համար։ Հրատարակվում են նաև զուտ կրոնական բնույթի աշխատություններ, որոնք մեծ մասամբ հետապնդում էին Վենետիկի հրատարակությունների միջոցով ներթափանցող կաթոլիկական վարդապետության գրավոր պրոպագանդայից հայ զանգվածներին հեռու պահելու, հայ եկեղեցու միասնությունը պահպանելու նպատակ։

Հրատարակված գրքերը բազմաթիվ օրինակներով իրացվում էին առաջին հերթին ռուսահայ գաղթօջախներում՝ Կովկասի, Մոլդավիայի հայաշատ շրջաններում, Նոր Նախիջևանում, Աստրախանում և այլուր։ Ռուսաստանի սահման-

18 Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2949, թ. 49, 93—94։

ներից դուրս գրքեր էին առաքվում մասնավորապես Կոստանդնուպոլսի և Հնդկաստանի հայ գաղթօջախները[19]։

Ռուսահայ գաղթավայրերը աշխույժ հարաբերությունների մեջ էին մայր հայրենիքի հետ։ Այդ կապերն ու շփումները իրականացվում էին լայն չափերով, բաղում ձևերով ու եղանակներով, ամենից առաջ առևտրական շփումների միջոցով։ Ռուսաստանը մեղ հետաքրքրող ժամանակաշրջանում, ինչպես նկատեցինք, առևտրական սերտ հարաբերություններ ուներ Պարսկաստանի հետ։ Աստրախանի միջոցով իրականացվող հատկապես մետաքսի աշխույժ առևտրում ակտիվ դեր կատարող հայ վաճառականները իրենց առևտրական գործունեության ընթացքում կենդանի կապերի մեջ էին մտնում Հայաստանի կամ հայկական շրջանների հետ։

Ռուսահայ թեմը էջմիածնի հոգևոր գերիշխանությանը ենթարկվելու շնորհիվ համագործակցությունը իրականացվում էր նաև եկեղեցու միջոցով։ Ռուսահայ գաղթավայրերի հետ էջմիածնի կապերը արտահայտվում էին ուսումնական գործին հետևելու, եկեղեցական հաստատությունները հավաքելու, կրոնական զանազան ծիսակատարությունների առիթով իրականացվող այցելությունների միջոցով և այլ եղանակներով։ Դրանից բացի, ռուսահայերը սովորություն ունեին Երուսաղեմի և Մշո Ս. Կարապետի վանքը հեռավոր ուխտագնացություն կատարել։ Թիֆլիս—Երևան—էջմիածին երթուղով երկու-երեք ամիս տևող ուխտագնացության ընթացքում նրանք ի մոտո ծանոթանում էին Անդրկովկասի ու Հայաստանի հայության կյանքին։

Այսպիսով, կենդանի կապերի միջոցով և այլ ճանապարհներով հասնող տեղեկությունների շնորհիվ ռուսահայերը տեղյակ էին բուն Հայաստանում տիրող իրավիճակին, ժողովրդի ծանր դրությանը և անտարբեր չեն եղել իրենց ժողովրդի բախտի, նրանց պատմական ճակատագրի հանդեպ։ Ռուսահայ գաղթավայրերը ջանացել են բարձր պահել ազատագրական շարժման ոգին։ Պատահական չպետք է համարել, որ Հայաստանի ազատագրման ծրագրերը մտահղանում ու մշակվում էին ամենից առաջ Ռուսաստանի հայկական գաղթավայրերում, այնտեղի առաջավոր գործիչների կողմից։

Ռուսաստանի միջոցով Հայաստանի ազատագրման այդ նախագծերը հրապարակ եկան տակավին XVIII դարի 60-ական թթ.։

1768 թ. վերջերին սկսված ռուս-թուրքական պատերազմը աշխուժացրեց ազատագրական շարժումները և սուլթանական ծանր լուծը թոթափելու հույսերի նոր ալիք բարձրացրեց Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների մեջ։ Պատերազմը և Կովկասում ռազմական գործողություններ սկսելու հեռանկարը ոգևորություն առաջ բերեցին նաև հայրենիքի ազատագրության երազանքներով ապրող ռուսահայերի մեջ։ 1769 թ. Ռուսաստանի հայ առևտրաարդյունաբերական շրջանների խոշոր ներկայացուցիչներից Մովսես Սարաֆյանը արտաքին գործերի կոլեգիա է ներկայացնում Հայաստանը ազատագրելու և Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պետությունը վերականգնելու ուշագրավ նախագիծ։ Նրա մշակմանը մասնակցել կամ տեղյակ են եղել Ռուսաստանի նշանավոր հայերից Գր. Կամպանյանը, Հ. Լազարյանը և ուրիշներ[20]։ Ներածությունից և տասնչորս հոդվածից բաղկացած այդ նախա-

---

19 Նույն տեղում, թ. 57—58։

20 А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1945, էջ 267—268։

գծում առաջարկվում էր ռուսական զինվորական կորպուսի, Մոսկվայի, Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի և մյուս քաղաքներում ապրող հայերից կազմված զորախմբերի և Վրաստանի ու Ղարաբաղի ռազմական ուժերի միջոցով ազատագրել Վրաստանը և ապա ոչ միայն Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան, այլև ամբողջ Հայաստանը։ Հատկանշական է, որ Հայաստանի ազատագրման գործում մեծ տեղ էր տրվում հենց իրենց՝ հայերին։

1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով ամրապընդվում են Ռուսաստանի դիրքերը Սև ծովի առափնյա մասերում։ Ցարական կառավարության համար առաջնահերթ խնդիր է դառնում Կասպից ծովի շրջանում գերիշխանություն ձեռք բերելը։ Այդ նպատակով ռուսական արքունիքը, օգտվելով Պարսկաստանում սկսված ներքին երկպառակություններից, 1779 թ. ծրագրում է արշավանք կազմակերպել դեպի Անդրկովկաս։ Նա այդ գործում լայնորեն օգտվում է անդրկովկասյան ժողովուրդների, այդ թվում նաև հայ ազատագրական շարժման գործիչների ծառայություններից։

XVIII դարի վերջին քառորդի Ռուսաստանի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչների մեջ աչքի էին ընկնում հատկապես ռուսահայ թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանը (1743—1801) և հայ մեծահարուստ Հովհաննես Լազարյանը (1735—1800)։ Լինելով բանիմաց ու գործունյա անձնավորություններ, նրանք ակտիվորեն մասնակցում էին տեղի գաղթավայրերի կյանքին, Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրման ծրագրերի մշակմանը և անգամ այդ ուղղությամբ ձեռնարկվող գործնական քայլերին։

Պարսկաստանի դեմ ծրագրվող ռազմական արշավանքի նախապատրաստությունը հանձնարարվում է Ա. Վ. Սուվորովին։ 1780 թ. հունվարին Պետերբուրգում մի քանի հանդիպումներ են տեղի ունենում մի կողմից Ռուսաստանի պետական ու ռազմական գործիչների, մյուս կողմից՝ Հ. Արղությանի և Հ. Լազարյանի միջև, որտեղ հայ գործիչները հանգամանալից տեղեկություններ են տալիս Անդրկովկասի ռազմաքաղաքական և տնտեսական վիճակի մասին[21]։ Նրանք Սուվորովին են ներկայացնում Հ. Լազարյանի ղեկուցագիրը Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պետականությունը վերականգնելու մասին, որը հայտնի է «Պարոն Իվան Լազարևի նոտա» անունով[22]։ Ենթադրվում է, որ այդ ղեկուցագիրը Սուվորովը ներկայացրել է Եկատերինա II կայսրուհուն[23]։

Հայ ազատագրական շարժումների աշխուժացման այս շրջանում պարսկական լուծը թոթափելու և հայկական պետականությունը վերականգնելու խնդիրը թվում էր այնքան ռեալ ու մոտալուտ, որ Արղությանը մշակում և 1783 թ. ռուսական արքունիք է ներկայացնում մեկ այլ նախագիծ՝ «Կերպ դաշնադրության ի մեջ երկու ազգաց Ռուսաց և Հայոց» վերնագրով[24]։ Այն կազմվել էր

---

21 Ա. Սուվորովի և 1780-ական թթ. հայ-ռուսական հարաբերությունների մասին տե՛ս Մ. Դ. Ներսիսյան, Ա. Վ. Սուվորովը և հայ-ռուսական հարաբերությունները 1770—1790-ական թթ., Երևան, 1944։ Նույնի՝ Из истории русско-армянских отношений, кн. I, Ереван, 1956, էջ 43—100։ А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х гг. XVIII столетия, Ереван, 1947, էջ 19—36։

22 «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», т. II, М., 1838, էջ 68—70։

23 Տե՛ս М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. I, էջ 55։

24 Տե՛ս «Դիվան Հայոց պատմության», գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 731—734։

Լազարյանի հավանությամբ (ու թերևս նաև մասնակցությամբ) և արտահայտում էր ռուսահայ շրջանների մտայնությունը։ Այդ նախագիծը փաստորեն առաջարկ-ցանկություն էր ապագա Հայաստանի քաղաքական կառուցվածքի, ռուսական կայսրության և նրա հովանավորության ներքո գտնվող հայկական պետության փոխհարաբերությունների մասին։ Նախագծի համաձայն Ռուսական կայսրությունը և Հայոց թագավորությունը միմյանց հետ կապված էին լինելու հավիտենական բարեկամությամբ։

Հայաստանի ազատագրության հարցը կրկին ակտիվացավ XVIII դարի 90-ական թթ. կեսերին։ Պարսկական Աղա-Մահմեդ խանի ավերիչ արշավանքի ճնշող ազդեցությունը վերացնելու, Անդրկովկասում Ռուսաստանի դիրքերը ամրապնդելու նպատակով 1796 թ. կազմակերպվում է Վ. Զուբովի արշավանքը։ Ռուսական զորքի արշավանքին նպաստելու համար նրա մոտ, Ղղլար է հրավիրվում Հ. Արղությանը։ Վերջինս Կովկասի հայկական գաղթավայրերի բնակչության ակտիվ օժանդակությամբ մեծապես նպաստում է զորքի պարենավորմանը, տեղանքին ու երթուղուն ծանոթացնելու, հակառակորդի ուժերի մասին տեղեկություններ հավաքելու և առհասարակ ռուսական զորքերի առաջընթացը դյուրացնելու գործին։ Ռուսական զորքերը հաջողությամբ առաջ են շարժվում, գրավում Դերբենդը, Ղուբան, Բաքուն, Գանձակը։ Ռուսահայ զանգվածները, հատկապես հայ ազատագրական շարժման գործիչները, մեծ հույսեր էին կապում այդ արշավանքի հաջողության հետ և փայփայում այն հույսը, թե այս անգամ իրականանալու է Հայաստանը ազատագրելու իրենց բաղձանքը։ Սակայն, դժբախտաբար, Պավել I-ի գահ բարձրանալով, ինչպես հայտնի է, հետագա իրադարձությունները միանգամայն այլ կերպ զարգացան, ռուսական զորքերը ետ կանչվեցին։

Այսպիսով, հայ-ռուսական հարաբերությունների աշխուժացման և Արևելյան Հայաստանը պարսկական ծանր տիրապետությունից ազատագրելուն անմիջապես նախորդող ու այն նախապատրաստող պատմական իրադարձությունների շրջանում Ռուսաստանի հայ գաղթօջախները կարևոր դեր կատարեցին։ Նրանց դերը էական էր երկու ժողովուրդների պատմական անցյալին ու մշակույթին փոխադարձաբար ծանոթացնելու, հոգևոր շփումների ու փոխճանաչման գործում։

Ռուսաստանում հայ գաղթօջախների համար ստեղծված բարենպաստ պայմանների, մասնավորապես նրանց տրված տնտեսական ու իրավաքաղաքական արտոնությունների շնորհիվ նրանք աճում ու զարգանում էին։ Ռուսահայերի այս բարեկեցիկ վիճակը ազդում էր Պարսկաստանի և Թուրքիայի դաժան տիրապետության տակ հեծող հայերի վրա, նրանց համակրությամբ տրամադրում հյուսիսային հզոր հարևանի նկատմամբ։ Դա իր հերթին ամրապնդում էր հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը, ուժեղացնում նրա օգնությամբ ազատագրվելու ձգտումը։

Ռուսահայ զանգվածները, կապված լինելով մայր հայրենիքի հետ, քաջատեղյակ էին իրենց հայրենակիցների ծանր վիճակին և իրավամբ հայ ժողովրդի փրկությունը կապել են բացառապես Ռուսաստանի հետ և ամեն կերպ ջանացել են նպաստել իրենց հայրենիքի ազատագրմանը։ Հատկանշական է, որ XVIII դարի երկրորդ կեսին Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրման համար ներկայացված բոլոր ծրագրերը (բացառությամբ հնդկահայ նախագծի) մշակվել են Ռուսաստանի հայկական գաղթավայրերում։ Դա նշա-

նակում է, որ այնտեղ ազատագրական շարժման համար համապատասխան մթնոլորտ և նպաստավոր պայմաններ էին ստեղծված։

Ավելին, ռուսահայ գաղթավայրերը գործնական քայլեր են կատարել պարսկական լծից Արևելյան Հայաստանի ազատագրմանը նպաստելու ուղղությամբ։ Հայտնի է, որ 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ ռուսական զորամասերի ռազմական գործողություններին օգնելու նպատակով Թիֆլիսում Ներսես Աշտարակեցու ակտիվ մասնակցությամբ կազմակերպվում են հայ կամավորական ջոկատներ։ Հատկանշական է, որ Անդրկովկասի հայության ներկայացուցիչների հետ կամավորական այդ գումարտակներում ընդգրկվելու ցանկություն են հայտնել նաև Աստրախանի և Հյուսիսային Կովկասի հայ գաղթավայրերի հայրենասերները։ Աստրախանի առևտրականները իրենց հոժարակամ մասնակցությունն են բերել Կասպից ծովով ռուսական զորքերի և հատկապես պարենի տեղափոխման գործում։ Այսպես, օրինակ, 1826 թ. ապրիլին, ընդառաջելով Կովկասի կառավարչապետ, գեներալ Երմոլովի ցանկությանը, նրանք (այդ թվում և հայ վաճառականներ Նիկոլայ Մադաթովը և Ռաֆայել Նազարովը) 20 նավ են տրամադրում ռուսական գվարդիական գնդի և պարենամթերքների տեղափոխության համար[25]։

Այդ ամենը վկայում է հայ գաղթավայրերի բնակչության հայրենասիրական ձգտումների, հայ ժողովրդի ճակատագրի, նրա պատմական բախտի նկատմամբ նախանձախնդիր վերաբերմունքի մասին։

ВХОЖДЕНИЕ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В СОСТАВ РОССИЙСКОГО ГОСУДАРСТВА И АРМЯНСКИЕ ПОСЕЛЕНИЯ В РОССИИ

Доктор историч. наук В. Б БАРХУДАРЯН

(Резюме)

Армянские поселения в России (в Москве, Петербурге, Астрахани, Новом Нахичеване, Григориополе, на Северном Кавказе) играли большую роль в укреплении русско-армянских политических и культурных связей в последней четверти XVIII — начале XIX вв. Армянская интеллигенция в этих поселениях всемерно содействовала ознакомлению своих соотечественников с историей и культурой русского народа. Армянские поселения в России были тесно связаны с Арменией, стремились к ее освобождению, становясь, по существу, очагами армянского освободительного движения; поэтому нельзя считать случайным, что большинство проектов освобождения Армении с помощью России от ига персидских и турецких завоевателей вынашивались в передовых общественных кругах армянских поселений в России.

---

[25] «Кавказский сборник», т. XXVII, Тифлис, 1908, էջ 140—141, 161։